Ապրիլի 11-ին տեղի ունեցավ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կարգապահական կոմիտեի հերթական նիստը՝ ՀՖՖ Կարգապահական կոմիտեի նախագահ Ռուբեն Սինոյանի նախագահությամբ՝

ՈՐՈՇՎԵՑ՝

07/04/13թ. «Նիգ-Ապարան-97»-«Իջևան-97» խաղին «Իջևան-97» թիմի ֆուտբոլիստ Էդգար Դավթյանի հեռացման (նույն խաղում 2 զգուշացում) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, «Նիկարմ» ֆուտբոլային ակումբին տուգանել 3000 դրամ:

07/04/13թ. «Իմպուլս-2-97»-«Ֆուրման-97» խաղին «Իմպուլս-2-97» թիմի ֆուտբոլիստ Էրիկ Էլլարյանի հեռացման, մրցակցին հայհոյելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ որակազրկել 2 խաղով, «Էրեբունի-Դիլիջան» մարզական ակումբին տուգանել 15000 դրամ:

05/04/13թ. «Շիրակ-95»-«Միկա-95» խաղին «Միկա-95» թիմի չներկայանալու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ «Միկա-95» թիմին գրանցել տեխնիկական պարտություն, «Միկա» ֆուտբոլային ակումբին տուգանել 100000 դրամ:

Տուգանքի վճարման ժամկետները խախտելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնագրքի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝
4ա. «Նիկարմ» ֆուտբոլային ակումբին (163 000 դրամ) - տուգանել 32600 դրամ,
4բ. ԽՄՕՄ մարզադպրոցին (45 000 դրամ) - տուգանել 9000 դրամ: